ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2016թ. թիվ 115-Ա

«ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 4 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՊՓԲԸ-Ն «ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՊՓԲԸ-ԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 20-րդ հոդվածներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 285-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի 1-ին պարբերության՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Վերակազմակերպել «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» և «Վանաձորի թիվ 4 պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերությունները՝ «Վանաձորի թիվ 4 պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերությունը միացնելով «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Վերակազմակերպվող ընկերությունների տնօրեններին՝

Կնքել միացման պայմանագիր, կազմել փոխանցման ակտ և դրանք ներկայացնել հաստատման:

3. «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրեն Ս.Նազարյանին՝

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ–ի կանոնադրության մեջ կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ և ներկայացնել հաստատման:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս.Լամբարյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. ապրիլի 20
ք.Վանաձոր